

ԱՌՑԱՆՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԽՆԴՐԱԳԻՐ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ներկայումս լեզվաբանական շատ հետազոտություններ միտված են պարզելու, թե ինչպես է լեզուն օգտագործվում որպես հաղորդակցման միջոց, և ինչպես է մարդու էությունն իր մտավոր և հոգեկան ներաշխարհով արտացոլվում խոսքում: Արդ, հաղորդակցությունը դիտվում է որպես հասարակական գործունեության տեսակ, որտեղ կարևորվում է, թե ինչպես և հաղորդակցական ինչ նպատակով է լեզուն կիրառվում (Levinson 1983; Van Dijk 1997; Պարոնյան 2011; Paronyan 2012): Խոսքը, որն առաջին հերթին տեղեկատվության տարածման և փոխանակման գործառույթ է կատարում, հասարակական կարևոր գործոն է, որի միջոցով հասարակությունը կարգավորում է իր առօրյա կյանքը և հաղորդակից դառնում աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին և մարդկությանը հուզող հարցերին:

Չեռահաղորդակցման միջոցների և նորարարական տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցի ստեղծման ու տարածման հետ առաջ եկավ համակարգչի միջոցով շփման զաղափարը (computer-mediated communication/CMC), որի շնորհիվ տեղեկատվության փոխանցման գործընթացը ավելի դյուրին է դարձել (Holmes 2005): Ներկայումս համացանցը ծառայում է ոչ միայն մարդկանց զվարճացնելու և նրանց ազատ ժամանակը լցնելու նպատակին, այլև ապահովում է հաղորդակցումն ու տեղեկատվության փոխանցումը: Ավելին, այսօր աշխարհի շատ երկրներում կիբեր տարածության (syberspace) մեջ ստեղծվել են հատուկ վեբկայքեր, որտեղ առցանց եղանակով տեղադրվող էլեկտրոնային խնդրագրերի միջոցով աշխարհի տարբեր ծայրերում ապրող օգտատերերին հնարավորություն է ընձեռվում իրար հայտնելու իրենց տեսածն ու լսածը՝ առանց ժամանակային և տարածական սահմանափակման: Էլեկտրոնային խնդրագիրը համացանցային հաղորդակցման տարատեսակ է, որի միջոցով մարդիկ օժանդակում են միմյանց և միավորվում՝ հանուն արդար ու խոսդաղ կյանքի, հանուն մարդկային բարօրության, ընդդեմ բնական աղետների ու մարդկային չարության:

Ինչպես գիտենք, տեղեկատվություն հաղորդելու և փոխանակելու ամենատարածված և ամենսիհին ձևերից մեկը նամակագրությունն է: Ինչպես մարդկային գործունեության ցանկացած տեսակ, նամակագրությունը ևս հասարակության զարգացմանը գուզահեռ ենթարկվել է որոշակի

փոփոխությունների, համապատասխանեցվել տվյալ պատմական ժամանակահատվածի և տվյալ հասարակության պահանջներին: Դեռևս հին ժամանակներում, երբ տպագրություն և լրագրություն դեռ չկային, մարդիկ ձեռագիր նամակներով էին միմյանց հաղորդում իրենց ու իրենց շուրջ կատարվածի մասին: Այսօր, երբ հասարակական կյանքի հետ առնչվող ցանկացած երևույթ տեղափոխվում է վիրտուալ աշխարհ, նամակագրությունը ևս իր հաստատուն տեղն է զբաղեցնում համացանցում, և լայնորեն կիրառվում որպես տեղեկատվության փոխանցման և հաղորդակցության էլեկտրոնային միջոց:

Սույն հոդվածում փորձ է արվում բացահայտել նամակագրության ժամանակակից, համացանցային դրսևորումներից մեկի՝ առցանց էլեկտրոնային խնդրագրի գործառական առանձնահատկությունները՝ պայմանավորված հասարակական կյանքում դրա դերով ու գործառույթներով, ինչպես նաև լեզվական միավորների և կառույցների կիրառման առանձնահատկություններով:

Ինչ խոսք, ըստ իրենց ձևի և բովանդակության, հաղորդակցական նպատակի, նամակները տարբեր տեսակի և քնույթի են: Այս առումով, բացի զուտ տեղեկատվություն հաղորդելուց, նամակագրությունը կարող է հասարակական կյանքի տարբեր իրավիճակներում նաև այլ գործառույթներ իրականացնել, ինչպես օրինակ՝ գործարար կապերի հաստատում, բարեկամական կապերի ամրապնդում, վարչաքաղաքական հարցերի քննարկում, անձնական կամ հասարակական խնդիրների կարգավորում, ուղղորդում, խորհրդատվություն և այլն: Սա վերաբերում է հատկապես նամակի <<հասարակական>> կամ <<բաց>> կոչվող տեսակին (social/open letters), որն ուղղված է առաջին հերթին հանրությանը և բացի տեղեկատվական գործառույթից, այն նաև հասարակական կարծիք և համոզմունքներ ձևավորելու, մարդկանց ուղղորդելու գործառույթ է կատարում (Barton & Hall, 2000): Մեր ուսումնասիրություններն այս ոլորտում թույլ են տալիս եզրակացնել, որ առցանց էլեկտրոնային խնդրագիրը կարող է համարվել հասարակական կամ բաց նամակի յուրօրինակ, համացանցային տարատեսակ, որը պետական իրավասու մարմիններին առցանց եղանակով հասցեագրված դիմում/խնդրանք/պահանջ լինելով հանդերձ՝ բաց է հանրության համար և ուղղված է առաջին հերթին լայն հասարակությանը:

Ընդհանուր առմամբ, առցանց էլեկտրոնային խնդրագիրը հիմնականում մի շարք նպատակներ է հետապնդում. այն արտահայտում է հեղինակների կարծիքն ու դիրքորոշումը որևէ կոնկրետ խնդրի վերաբերյալ, հասարակության լայն շերտերին տեղեկացնում է ժամանակակից կյանքի առավել կարևոր հարցերի մասին: Միաժամանակ, խնդրագիրը հասարա-

կական կարծիք է ձևավորում, քաջալերում ու համոզում է համանման կարծիք ունեցող մարդկանց՝ միավորվելու մեկ ընդհանուր գաղափարի շուրջ: Այսպիսով՝ խնդրագրի հաղորդակցական նպատակներից մեկն է համոզել և դրդել պետության համապատասխան մարմիններին կամ կազմակերպություններին, որ կոնկրետ բարեփոխումներ կատարեն: Հետևաբար, թեև թեմատիկ առումով առցանց էլեկտրոնային խնդրագրերը տարաբնույթ են, այսինքն՝ դրանցում արծարծվում են զանազան հասարակական հետաքրքրություն ունեցող հարցեր, ինչպես օրինակ՝ քաղաքական, տնտեսական, բնապահպանական, մարդու և կենդանիների հիմնարար իրավունքներին վերաբերող և բազում այլ հարցեր, դրանք բոլորն էլ իրականացնում են երկու հիմնական գործառույթ, այն է՝

1. **տեղեկատվական գործառույթ**՝ որևէ հարցի, խնդրի, ծառայության, երևույթի, իրադարձության և այլնի մասին տեղեկության կամ գիտելիքի հաղորդում, այսինքն՝ տեղեկատվական հաղորդակցում հեղինակների և ենթադրյալ ընթերցողների միջև:

2. **Ներգործման կամ համոզման գործառույթ**՝ հետաքրքրության, վստահության, նախապատվության, կարծիքի և դիրքորոշման աստիճանական ձևավորում և կոնկրետ հետհաղորդակցական գործողություններ կատարելու ցանկության և համոզմունքի առաջացում:

Անդրադառնալով նամակի, այդ թվում նաև էլեկտրոնային խնդրագրի գործառական պատկանելիությանը՝ նախևառաջ հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ, որպես դիսկուրսի տարատեսակ, նամակը միանշանակորեն որևէ կոնկրետ գործառական ոճի չի պատկանում: Իրենց լեզվական և արտալեզվական առանձնահատկություններով պայմանավորված՝ նամակի տարբեր տեսակները կարող են հանդես գալ այս կամ այն գործառական ոճի շրջանակներում, ինչպես օրինակ՝ անձնական նամակը (private letter) հիմնականում պարունակում է առօրյա-խոսակցական ոճին հատուկ տարրեր, պատմվածքներում և վեպերում տեղ գտած նամակները ավելի շատ հարում են գեղարվեստական ոճին, գործարար նամակները (business letter)՝ պաշտոնական-գործարարական ոճին, բաց կամ հասարակական նամակը (social letter)՝ հրապարակախոսական ոճին (Кытцова, 1998:15): Հետևաբար, առցանց էլեկտրոնային խնդրագիրը, որպես բաց նամակի էլեկտրոնային տարբերակ, ամենայն հավանականությամբ, պետք է ընդգրկվի հրապարակախոսական ոճի կազմում: Դրա մասին են վկայում էլեկտրոնային խնդրագրի վերջ նշված գործառույթները, դրա դերը հասարակական կյանքում, հաղորդակցական նպատակներն ու խնդիրները:

Նշենք, որ հրապարակախոսական ոճը կիրառության լայն ոլորտներ ունի, քանի որ առնչվում է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագա-

վառներին: Թերևս դա է պատճառը, որ հրապարակախոսական ոճի սահմանները մյուս ոճերի համեմատությամբ ավելի ազատ են ու ճկուն. դրանում կարող են գործածվել ինչպես գեղարվեստական գրականությանը բնորոշ պատկերավորման և լեզվաարտահայտչական տարբեր միջոցներ, այնպես էլ պաշտոնական, գիտական ոճի տարրեր: Ի տարբերություն գործառական մյուս ոճերի, հրապարակախոսական ոճը բնորոշվում է հասարակության լայն զանգվածների վրա ներգործելու ուժով: Ընդամին՝ ընդունված է այն տեսակետը, որ հրապարակախոսական ոճի հիմնական նպատակը համոզման արվեստն է, որն էլ պայմանավորված է նրա քարոզչական բնույթով (Galperin 1997, Арнольд 1973, Գասպարյան և այլք 2011):

Հաղորդակցական նպատակներն ու պայմանները տարբերակիչ դեր են խաղում նաև դիսկուրսի ժանրային դասակարգման հարցում: Դիսկուրսի ժանրային պատկանելիությունը կախված է հաղորդակցական նպատակներից և խոսքային իրադրությունից, դրանով է պայմանավորված դիսկուրսի ներքին լեզվական կառուցվածքը (Swales 1990: 59): Վ.Կ. Բհատիան նշում է, որ ժանրը հատուկ հաղորդակցական իրադրություն է, որը բնորոշվում է հաղորդակցվողների համար հասկանալի և ըմբռնելի կոնկրետ հաղորդակցական նպատակներով (Bhatia 1993:13):

Տեսական կյուբի քննությունը ցույց է տալիս, որ նամակների տեսակները պայմանավորված են նամակագրության միջոցով հաղորդակցվողների միջև փոխվում հաստատելու առանձնահատկություններով: Տարատեսակ նամակները համախմբվում են էպիստոլյար ժանրում: Էպիստոլյար ժանրի կարևոր հատկանիշներից են՝ թեմատիկ բազմազանությունը, գաղափարական ուղղվածությունը, նպատակամղվածությունը, պարզությունն ու մատչելիությունը. ինչպես նաև հասցեատիրոջ կողմից պատասխան արձագանքի ակնկալիքը, որը կարող է դրսևորվել ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական միջոցներով (Spacks 2005): Մենք գտնում ենք, որ առցանց էլեկտրոնային խնդրագիրը, որը բաց նամակի էլեկտրոնային տարբերակ է, սլեյք է նույնպես դասվի էպիստոլյար ժանրին:

Որպես էլեկտրոնային խնդրագրի ստեղծման և տարածման միջոց համացանցն իր ազդեցությունն է թողել խնդրագրի լեզվի և կառուցվածքի վրա: Առցանց հարթակ անցնելով՝ խնդրագրի ձևաչափը փոխվում է կիբեր տարածության մեջ հաստատվելու համար: Նախ՝ զգալիորեն կրճատվում է նրա ծավալը: Խնդրագրի ավանդական, թղթային տարբերակը (paper-based petition) սովորաբար բավականին երկար էր, իսկ տեքստը պարունակում էր մանրակրկիտ շարադրված փաստարկներ՝ ամրագրված օրինակներով կամ նմանատիպ դեպքերով, նկարագրվում էր խնդրի առաջացման և լուծման պատճառահետևանքային կապը և այլն: Ներկայումս, ելնելով

համացանցի լեզվի (Netspeak) պահանջներից, ենթադրվում է շարադրանքի լակոնիկության հասնող սեղմություն և հակիրճություն, որը պայմանավորված է ընթերցողին չձանձրացնելու և նրանից հնարավորինս քիչ ժամանակ խլելու, ինչպես նաև էլեկտրոնային էջի վրա քիչ տեղ զբաղեցնելու հանգամանքով (Crystal 2004):

Առցանց էլեկտրոնային խնդրագրի պերսոնազիվ նպատակի հաջող իրականացման համար անհրաժշտ է, որ այն հասկանալի և մատչելի լինի հասարակության լայն շերտերի համար: Ինչպես ցանկացած հաղորդակցություն, այնպես էլ էլեկտրոնային հաղորդակցության կարևորագույն պայման է հասցեագրողի կողմից օգտագործվող լեզվական միավորների ընկալումը հասցեատիրոջ կողմից, առանց որի կողմերի փոխըմբռնումը չի կարող տեղի ունենալ: Տեքստը ստեղծելով՝ հասցեատերն ակնկալում է, որ այն ճիշտ ձևով կընկալվի, կմեկնաբանվի ընթերցողի կողմից: Հետևաբար, խնդրագրի լեզուն պետք է լինի պարզ, հստակ, մատչելի հասարակության լայն շերտերի համար, որպեսզի դրանում արժարժվող խնդիրը և դրա կարևորությունը ըմբռնելի լինեն օգտատերերի համար՝ անկախ մշակութային և կրոնական պատկանելիությունից:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ առցանց էլեկտրոնային խնդրագրի լեզուն պետք է գերծ լինի սոցիալական շատ կայքերին բնորոշ <<լեզվական անկարգություններից>>, քանի որ այն համարվում է պաշտոնական փաստաթուղթ և, վերջին հաշվով, հասցեագրված է պետությանը: Հետևաբար՝ առցանց խնդրագրի լեզուն այնքան պարզեցված չէ, որքան տարբեր սոցիալական կայքերում (facebook, twitter), ակնթաթային հաղորդագրություններում (instant messaging), համացանցային քննարկումներում (chat) կիրառվող անգլերեն խոսքը: Դրանցում առկա չեն բառերի և բառակապակցությունների այնպիսի կրճատ ձևեր և այնպիսի հապավումներ, որոնք լայնորեն կիրառվում են սոցկայքերի քննարկումների ժամանակ, ինչպես օրինակ՝ *4U* - for you, *B4* - before, *B* - fine, *e1* - everyone, *OMG* - oh my God, *lol* - laughing out loud, *AFA* - as far as, *ASA* - as soon as, *pls* - please, *BW* - best wishes, *deets* - details, *GBY* - god bless you, *HK* - hugs and kisses և այլն: Առցանցներում կիրառվող լեզվում անգլերենի նորմերը միշտ չէ, որ պահպանվում են: Շատ դեպքերում սոցկայքերի քննարկումներում անփութության կամ հապճեպության հետևանքով ուղերձի հեղինակը կարող է քերականական կամ ուղղագրական սխալներ թույլ տալ: Սրան հակառակ, էլեկտրոնային խնդրագրերում վրիպակների կամ սխալ քերականական ձևերի պատճառով, այն ոչ միայն, վստահություն չի առաջացնի ընթերցողի մոտ և կկորցնի իր պերսոնազիվ ուժը, այլև ուղղակի կմերժվի և տվյալ

խնդրագրի էջը կփակվի. անկախ դրանում արձարծվող խնդրի կարևորությունից:

Առցանց էլեկտրոնային խնդրագրի բառապաշարին անդրադառնալիս պետք է նշել, որ դրանում գերակշռող մասն են կազմում ընդհանուր գործածական և կոնկրետ հասարակական բնագավառին հատուկ չեզոք բառաշերտի բառեր և բառակապակցություններ. որոնք համատեքստում օգտագործվում են իրենց ուղղակի անվանական իմաստներով, ինչպես օրինակ՝ *human population, ecological effect, ecological consequences, wind power, global climate change, cold weather, environmental study, life in urban areas, endangered animals, extinct animals, landscape, domestic species of birds, protected species, natural resources, mountain areas, coal mining* և այլն:

Այնուամենայնիվ, շատ դեպքերում խնդրագրի հեղինակը իր պերսոնալիվ նպատակն իրականացնելու համար դիմում է հաղորդակիցների մոտ վստահություն առաջացնելու հնարին: Այսպես, նա փորձում է ընթերցողների մոտ այնպիսի տպավորություն ստեղծել, որ ինքն իսկապես անհանգստացած է տվյալ խնդրով և դրա լուծման փնտրտույքների ճանապարհին հիմնադր է աշխատում: Կամ էլ իսկապես այդ ոլորտի փորձառու մասնագետ է: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ առցանց խնդրագրերում երբեմն հանդիպում են նեղ մասնագիտական եզրույթներ. ինչպես օրինակ՝ *chemical dihydrogen monoxide, manufacture of styrofoam, greenhouse gas emission, airborne release, ecological disaster, emission factor, carbon dioxide, genetic makeup, selective breeding, pollinator insect friendly plant, malnutrition, apex predator, crop pollination, neonicotinoid pesticide* և այլն:

Շատ հաճախ առցանց խնդրագրի հեղինակը փորձում է հուզաբարձր ահապաղական խոսքային միջոցներ կիրառել, ինչը մեծապես նպաստում և ամուր հիմք է ստեղծում պերսոնալիվ նպատակի իրականացման համար: Այսպիսով, տեքստին համոզիչ տոն և ազդեցիկություն հաղորդելու համար շատ են օգտագործվում գնահատողական բնույթի բառեր և արտահայտություններ, առնչանակային (connotative) հուզական իմաստ ունեցող ածականներ և մակբայեր, ինչպես օրինակ՝ *potentially disastrous threat, hard-hearted animal, weed killer, ornamental fish, apex predator, animal welfare, animal abuse, maltreated animals, Exponential rise, fragile biodiversity, squeezing wildlife, devastating impact, positively encourage, brilliantly colored fish, a nationwide ban, to heal environment, deathly quiet forest, lethal measures, ecological paradise* և այլն:

Քերականական և շարահյուսական կառուցվածքը նա կանոնավոր ու կայուն է, նախապատվություն է տրվում գրական ձևերին: Հեղինակն իր

միտքն ու նպատակը հստակ ու հասկանալի դարձնելու նպատակով հիմնականում կիրառում է պարզ համառոտ և պարզ ընդարձակ պատմողական նախադասություններ: Այնուամենայնիվ, երբեմն ոճական հատուկ նպատակներով, փոխվում է նախադասության ընդունված շարադասությունը և տրամաբանական շեշտի ազդեցությամբ շրջուն շարադասություն կազմվում, որը նա նպաստում է տեքստի համոզականությանը, ինչպես օրինակ՝ *Local and national government does have the duty to protect our treasured urban wildlife.; Out were whipped the population of grey wolves in that state.; Should a mining operation pollute the ground water or destroy the flora and fauna, then the agreement entitles them to sue the government in question for this loss.; Had proper measures been taken, this situation would not have occurred.; On no condition should we allow over-exploitation of the oceans.* և այլն:

Պարզության և մատչելիության հետ մեկտեղ, խնդրագիրը պետք է նպատակաուղղված, բավականաչափ ազդեցիկ և համոզիչ լինի. որպեսզի բաջալերի օգտատերերին՝ տվյալ խնդրի շուրջ միավորվելու, նրանց համոզի իրենց ձայնն ու աջակցությունը տալ տվյալ խնդրագրի օգտին և դրդի պետական համապատասխան մարմիններին խնդրին ցանկալի լուծում տալ: Այդ նպատակով հիմնականում խնդրագրի վերջին ամփոփիչ մասում հեղինակը ձգտում է խստապահանջության շունչ հաղորդել խնդրագրին՝ նպատակ ունենալով գազաթնակետին հասցնելու հասցեատիրոջ վրա կատարվող պերսուազիվ ներգործությունը: Ներագրման աստիճանական աճը խնդրագրերում տեղի է ունենում հետևյալ ձևերով.

■ *should, must, have to, be to* մոդալ բայերի միջոցով, ինչպես օրինակ՝ *We must come together to show our support for this unique location or it may be lost forever; This kind of animal neglect should never happen; We have to be heard, and we have to let our voices be heard; Injustice is to be treated fairly* և այլն:

■ Դրդման, հորդորման, համոզման երիմաստ պարունակող պերֆորատիվ բայերի միջոցով, ինչպես օրինակ՝ *We urge the Kelowna city council to allow backyard beekeeping of the domestic honey bee; We demand that Shisheido Co. Ltd., immediately stop all animal experiments for cosmetics; We ask the Japanese to refrain from whaling for the good of the people and whales; We strongly request the Knesset re-review the amendment preventing using animals in testing of cosmetics and cleaning products;* և այլն:

■ Երբեմն նաև խնդրանք արտահայտող *please + verb* կառույցի միջոցով՝ ուղերձին ավելի քաղաքավարի տոն հաղորդելու նպատակով, ինչպես օրինակ՝ *Please stop the experimenting of animals; Please sign this*

petition to stop animal abuse; Please help my effort to force the fat-cats in Canberra to place a nationwide ban on the substance before it is too late; և այլն:

Լեզվական միջոցներից գատ՝ առցանց էլեկտրոնային խնդրագրի գործառական ուսումնասիրության համար անհրաժեշտ է կարևորել նաև արտալեզվական, մասնավորապես հոգեբանական գործոնները, քանի որ դրանք առավելագույնս նպաստում են առցանց խնդրագրի արտահայտչականությանն ու հաջողությանը: Պետք է ասել, որ համացանցի շնորհիվ խնդրագրում ինտեգրվել են այնպիսի արտալեզվական գործոններ, ինչպիսիք են՝ նկարները, գծապատկերները, տեսաձայնագրությունը, աուդիոձայնագրությունը և այլն, որոնք, զուգակցվելով տպագիր տեքստի հետ՝ համապատասխան տրամադրություն են ստեղծում ընթերցողի մոտ: Եվ եթե լեզվական միջոցների օգտագործմամբ հեղինակն ազդում է ընթերցողի գիտակցության, տրամաբանության, մտավոր դաշտի վրա, ապա արտալեզվական գործոնները նպաստել ունեն ներգործելու օգտատերերի հոգևոր ներաշխարհի վրա (Petty & Cacioppo 1981):

Այսպիսով՝ առցանց էլեկտրոնային խնդրագիրը ընդգրկված է հրապարակախոսական ոճի կազմում և նպատակ ունի պերսուազիվ գործառույթ իրականացնել: Դրա համար անհրաժեշտ է, որ օգտատերերը լեզվական միջոցները ճիշտ ընտրեն և դրանք տեղին կիրառեն: Առցանց խնդրագրի տեքստը պետք է պարունակի առավելագույն տեղեկատվություն, խորությամբ ներկայացնի խնդրի էությունը, դրա առաջացման հիմնական պատճառներն ու հիմքերը, դրա լուծման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Մինևս ժամանակ այն պետք է առաջադրի դրա լուծման հնարավոր եղանակներն ու համոզի անհրաժեշտ հետհաղորդակցական քայլեր ձեռնարկել: Այդ իսկ պատճառով միայն համոզիչ փաստարկներով, լեզվական և արտալեզվական հնարներով հարուստ շարադրանքը կարող է էլեկտրոնային խնդրագրի հաջողության գրավական լինել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Ս., Մուրադյան Գ., Գասպարյան Ն., Գործառական ոճագիտություն, Երևան, ԵՊՀ Հրատարակչություն, 2011
2. Պարոնյան Շ. Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ, 2011
3. Арнольд, И.В. Стилистика современного английского языка, Ленинград, Просвещение, 1973
4. Barton, D. & Hall, N. Letter Writing as a Social Practice. USA. John Benjamin's publishing house, 2000
5. Bhatia, V. K. Analysing Genre: Language Use in Professional Settings, London, Longman, 1993
6. Crystal, D. Language and the Internet, Cambridge, CUP, 2004
7. Galperin, I.R. Stylistics, M. Vissaja skola, 1997

8. Holmes, D. *Communication Theory: Media, Technology and Society*, London, SAGE Publications, 2005
9. Levinson, S.C. *Pragmatics*, Cambridge, Cambridge University Press, 1983
10. Paronyan, Sh. *Pragmatics*, Yerevan, YSU publ., 2012
11. Petty, R.E. & Cacioppo, J.T. *Attitudes and Persuasion: Classic and Contemporary Approaches*, USA: Westview Press, 1981
12. Swales, J. *Genre analysis: English in Academic and Research Settings*, New York, Cambridge university press, 1990
13. Van Dijk, T.A. *Discourse as Social Interaction*, London, SEGA publications Ltd, 1997
14. www.change.org
15. www.thepetitionsite.com
16. www.GoPetition.com
17. www.petitiononline.com

Pragmatic Peculiarities of Online Petitions

The aim of the present paper is to study the language of online petitions from pragmatic perspective, taking into consideration their communicative purpose and the functions they perform in the global social context. Our analysis is based on the assumption that online petition is an Internet-based social letter that creates new opportunities for millions of netizens from all over the world to enlighten the public, by publishing and sharing information about different spheres of social life. Moreover, it aims at promoting changes on global, regional, and national issues by uniting people for a particular cause, by directing public opinion and achieving influence in public behaviour. Thus, the informative and persuasive function of online petitions allows us to state that they should be included within the scope of publicistic style, which is known for its focal characteristic feature of exerting a deep influence on public opinion and convincing the interlocutors of the truthfulness of the opinion or position in question.